


«Աղջիկները ՏՀՏ ոլորտում» միջազգային օր



Ապրիլի 26-ին ողջ աշխարհում նշվում է «Աղջիկները ՏՀՏ ոլորտում» միջազգային օրը: Այն նախաձեռնվել է Բեռախաղողակցության միջազգային միության (ITU) կողմից, որը ՄԱԿ-ի մասնագիտացված մարմին է: Օրը նպատակ ունի ստեղծել գլոբալ միջավայր, որը խրախուսում է աղջիկներին և երիտասարդ կանանց մտածելու ՏՀՏ աճող ոլորտում իրենց կարիերան սկսելու վերաբերյալ: Նշենք, որ Հայաստանի ուսանողների 12%-ը մասնագիտանում է տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, նրանց մեկ քառորդը աղջիկներ են: Հայաստանի ՏՀՏ ոլորտում ներգրավված մասնագետների 63%-ը տղամարդիկ են, 37%-ը՝ կանայք:

ՏՀՏ ոլորտի կին ղեկավարներ



Կանայք ղեկավարում են ՏՀՏ ընկերությունների միայն 1,3%-ը: Նրանցից յուրաքանչյուրը գերազանց դերային մոդելներ կարող են ծառայել երիտասարդ սերնդի համար: Նրանց թվում են՝ Թումոն ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն Մարի Լու Փափազյանը, «Մայքրոսոֆթ Արմենիա»-ի տնօրեն Եվա Յուլյանը, «Չեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի նախագծի ղեկավար ժենյա Ազիզյանը, «Իդրամ» ՍՊԸ-ի տնօրեն Գայանե Ստեփանյան, Հայկական վիրտուալ համալսարանի վարչական տնօրեն Աննա Ենգիբարյանը, «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ի տնօրեն Սոֆի Մեիրաբյանը, Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի մրայլ լուծումների տարածաշրջանային լաբորատորիայի ղեկավար Մարիամ Դավթյանը, ՏՏ ոլորտի փոխնախարար, նախկինում Գյումրիի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն Անայա Եղոյանը և այլք...

Կանայք գիտության մեջ



Գիտության ոլորտում կանանց ու աղջիկների համար հավասար հնարավորությունների ապահովմանը, նրանց նկատմամբ խտրականության բացառմանը և առաջադասմանն է ուղղված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70/212 բանաձևը, որով փետրվարի 11-ը հռչակվել է Գիտության ոլորտում կանանց ու աղջիկների միջազգային օր: Ի դեպ, այս բանաձևը նախաձեռնած շուրջ չորս տասնյակ պետությունների թվում եղել է նաև Հայաստանը:

Հայտնի է, որ Նոբելյան մրցանակի արժանացած գիտնականների միայն 3,1%-ն է կին, մինչդեռ ըստ ԵՄ վիճակագրական տվյալների՝ Եվրոպայի գիտնականների մեկ երրորդը կանայք են: ՀՀ ԱԿԾ տվյալներով՝ Հայաստանում գիտական աստիճան ունեցողներից 37%-ը կանայք են, ընդ որում, գիտության թեկնածուների թվում կանայք 46% են կազմում, իսկ գիտությունների դոկտորներից 20%-ն են կանայք:

Աղջիկներ և բարոյաբանականությունը



Girls in Tech. Աղջիկները՝ հանուն մարդասիրական գաղափարների

2018 ամիսի

Անվճար հավելված www.WomenNet.am



Հաղթանակի գրավականը

Ինչդեռ Կարբի գյուղի աշակերտուհիները գրավեցին Սիլիկոնյան հովիտը

Կարբի գյուղի Կահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցի աշակերտուհիները երազել անգամ չէին կարող Սիլիկոնյան հովտում հայտնվելու և Google-ի գլխավոր տնօրենի ծննդից մի քանի օր անց հայտնվելու մասին, սակայն այն, ինչ անհավանական էր թվում, իրականություն դարձավ աղջիկների համար: Սիլիկոնյան հովտում հայկական փոքրիկ գյուղի աղջիկների «Մեկ քայլ առաջ» խումբը հայտնվեց՝ շնորհիվ իրենց բացառիկ գաղափարի՝ ժեստերի լեզվի ինքնուսույց բջջային հավելվածի:

Սվետլանա Դավթյանը, Սոնա Ավետիսյանը, Վարդանուշ Նազարբեյանը, Վիոլետա Մկրտչյանն ու Աղավնի Հակոբյանն ուսուցիչ-մենթոր Կարդանուշ Հովհաննիսյանի գլխավորությամբ ստեղծեցին հայերեն և անգլերեն ժեստերի լեզվի բջջային հավելվածը, որն էլ անցյալ տարվա օգոստոսին հաղթեց աշխարհի խոշորագույն տեխնոլոգիական Technovation Challenge մրցույթում: Մրցույթին մասնակցում էին 10-18 տարեկան աղջիկների շուրջ 3 հազար թիմեր աշխարհի 105 երկրից: Ի դեպ, սա առաջին տարին էր, երբ մրցույթին մասնակցում էր նաև Հայաստանը:

«Հաղթանակն իսկապես անսպասելի էր, գրկախառնություն, մի քիչ ուրախության արցունքներ և հիասթափանց զգացողություն, որը յուրահատուկ էր և առաջացավ միայն այդ լուրը լսելուց հետո», - ասում է Վիոլետա Մկրտչյանը: Նրա խոսքով՝ ուրախությունը կրկնակի էր, որովհետև գիտակցում էին հաղթանակը միայն իրենցը չէ, այս հաջողությամբ նաև լսողության խնդիրներ ունեցող անձանց ինտեգրմանն են նպաստում:

«Այս գաղափարը ծնվեց շատ պատահաբար, երբ մեր դպրոց այցելեց մեր ընկերներից մեկի զարմուհին: Մենք, բնականաբար, տեսնելով նոր մարդու, փորձեցինք ծանոթանալ, զրուցել նրա հետ, սակայն պարզվեց, որ աղջիկը լսողության խնդիրներ ունի: Այդ ժամանակ ծագեց գաղափարը՝ ստեղծել մի հավելված, որը կօգնի մարդկանց սովորել ժեստերի լեզուն և կմիավորի լսող և չլսող մարդկանց», - պատմում են խմբի աղջիկները: Մինչև Սան Ֆրանցիսկո մեկնելը այս և ոչ պակաս հետաքրքիր և 43 ժրագրեր ներկայացվեցին «Տեխնոլոգիաների մարտահրավերներ Հայաստան-2017» մրցույթի շրջանակներում: Նախաձեռնությունը «Կանայք և տեղեկատվական հասարակությունը» ՀԿ-ինն էր, որի ղեկավար Նարինե Աբաջյանը Technovation Challenge ծրագրի տարածաշրջանային ղեկավարն է: Նրա խոսքով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը

հիմնականում տղամարդկային է ու այս փաստը հաստատվում է իր տարիների աշխատանքային փորձով: «Այսօր մեր բարձր դասարանների աշակերտուհիները բավականին լավ առաջադիմություն են ունենում մաթեմատիկա, ֆիզիկա առարկաներից, - ասում է նա, - բայց հետագայում, երբ կարիերայի ընտրության հարց է առաջանում, նրանք, սովորաբար առաջնորդվելով ծնողների, բարեկամների խորհրդով ու կարծրատիպերով, գրեթե չեն ընտրում ՏՏ ոլորտը: Դա գալիս է ինֆորմացիայի պակասից, և բացի այդ, մեր հասարակության համար կարծես թե տեսանելի չեն կանանց այն իրենցները, որոնք կարող են օրինակ ծառայել աճող սերնդի համար: Մեր կազմակերպությունը փորձում է վերացնել այդ բացը և կտրուկ կարծրատիպերը՝ նպաստելով կանանց և աղջիկների ներգրավմանը Հայաստանի տեղեկատվական հասարակությանը և նոր անուններ բացահայտելով այս ասպարեզում: Կազմակերպության ներկայացուցիչները համոզված են, որ Կարբի գյուղի աղջիկների հաղթանակը միակը չի լինելու, քանի որ նրանց օրինակը կբաշխվի Հայաստանի մյուս դպրոցների աշակերտուհիներին: Դրա մասին է վկայում այս տարվա սկզբին «Տեխնոլոգիաների մարտահրավերներ Հայաստան-2018» նոր մրցույթի մեկնարկը:

«Հայ կին նորարարների թոփ սասնյակ»

WomenNet.am կայքի կողմից հայտարարված «Հայ կին նորարարների թոփ սասնյակ» լրագրողական նյութերի մրցույթի շրջանակում ներկայացվել են մի քանի տասնյակ պատմություններ, որոնք պատմում են այն կանանց մասին, ովքեր իրենց նորարար գաղափարներով և օրինակով փոփոխություններ են բերում հասարակության, համայնքի և երկրի կյանքում: Նյութերը հրապարակվել են WomenNet.am կայքում, տարածվել «Կին նորարարներ» ֆեյսբուքյան էջի միջոցով: Պատմությունների մի մասը տեղ է գտել նաև «Կինը և բարոյաբանությունը» թերթի այս համարում:

Լավագույն 10 աշխատանքների հեղինակներն ու նրանց նյութերի հերոսները՝ նորարար կանայք, կատանան խրախուսական մրցանակներ: Մրցույթի արդյունքները կամփոփվեն մրցանակաբաշխության ժամանակ, որը տեղի կունենա 2018թ. մայիսին: Հիշեցնենք, որ մրցույթը մեկնարկել էր 2017 թվականի դեկտեմբերին «Կինը և նորարարությունը» նախագծի շրջանակում, որն իրականացվում է WomenNet.am կայքի կողմից՝ Lush Charity Pot բարեգործական նախաձեռնության աջակցությամբ:

WomenNet.am-ը շնորհակալություն է հայտնում մրցույթի բոլոր մասնակիցներին:

Լրագրողական մրցույթ



Լուսանկարում՝ «Բեթ» թիմի ղեկավար Շուշան Գրիգորյանն է

«Մնաբ» աղջիկները


Ներկայացնում ենք Երևանում անցկացվող ամենամյա Դիջիթալ տեխնոլոգիական ցուցահանդեսի մասնակիցներին

«Խելացի տուն»



Մոնիկա Չանթրանյանը և Գայանե Դեմիրճյանը ծրագրավորողներ են, աշխատում են Yerevan Telecommunication Research Institute-ում...

Ինտելեկտուալ խաղեր ու օգտակար հավելվածներ



25-ամյա Անի Կարապետյանը, չնայած իր երիտասարդ տարիքին, արդեն Codics ծրագրավորման ընկերության տեխնիկական բաժնի ղեկավարն է...

«Չեռականավարվող ձեռք»



Քրիստինե Բարայանն ու Աննա Կարամյանը Չեռականավարվող ձեռքի կիրառական ֆակուլտետում են սովորում...

Աղջիկները՝ հանուն մարդասիրական գաղափարների

Hacking for Humanity՝ մարդասիրական այս կոչի ներքո Girls in Tech հասարակական կազմակերպությունը արդեն տասը տարի սոցիալական նորարարության հեքթրոններ է անցկացնում...



«Ներգրավել, կրթել և ռզեշնչել»

Միջոցառման նախաձեռնողը Girls in Tech Ֆայաստան ԴԿ-ն էր, որը մասնակցության գլխավոր նախապայման էր սահմանել քիմերում առնվազն 50% կանանց և աղջիկների ներգրավումը...

2016 թվականին Սեդան որոշեց լրջորեն զբաղվել ՄՏ ոլորտում կանանց ներգրավվածության խնդրով...

«Առաջին հայացքից թվում է՝ հայաստանյան ՄՏ ոլորտում կանայք և աղջիկները շատ լուրջ խնդիրներ չունեն: Իրականում, սակայն, ոլորտում մի շարք խորքային խնդիրներ կան...

Girls in Tech-ը աշխատում է՝ հիմքում ունենալով անվերելի 3E (engage, educate, empower) հայտնի սկզբունքը՝ ներգրավել, կրթել և ռզեշնչել: Սեդան համոզված է՝ եթե կանայք ունեն ցանկություն...

կություն և կարողություն աշխատելու և ստեղծելու նրանք, անկախ ոլորտից, պետք է ունենան դրա հավասար իրավունքը: Դեռ այս գաղափարախոսությունն էր ընկած Hacking for Humanity հեքթրոնի հիմքում:

Դյուրընկալություն՝ հանուն մարդասիրության

Գլխավոր մրցանակը՝ 1.000.000 դրամի չափով, բաժին հասավ HostingForHumanity թիմին, որը պատրաստվում է տուրիզմի զարգացմանը...

Նախագծի ելույթները շատ պարզ է ընտանիքները, որոնք պատրաստ են մեկ կամ մի քանի օրով հյուրընկալել զբոսաշրջիկներին...

«Ամռոնի ճուտիկից» բիզնես լեդի

Գեքթրոնի շրջանակներում հատուկ մրցանակ ու 600 հազար դրամ ֆինանսական օժանդակություն ստացավ Շուշան Գրիգորյանի Peper թիմը...

«Այս մրցանակը մեզ շատ է օգնում: Ենթադրյալ, սկզբնական արտադրություն հիմնելու համար այս ֆինանսավորումը բավարար է, բայց ստացված գումարը մենք ներդնելու ենք Peper-ը մշակելու, զովագրելու, տարածելու մեջ...» - ասում է Շուշանը, նկատելով, որ պետք է մտածեք, որոնց պատճառով իրեն մասնակցառնել «Ամռոնի ճուտիկ» էր գգում, դարձան իր և թիմի երջանկաբեր այցեքարտը:

Կրեդո

«Ադահովիբ ԲՆ աճը ամեն օր մեկ տոկոսով, ամեն օր նոր բան սովորիր»

Սոֆի Մեհրաբյանը 30 տարուց ավելի է ինչ աշխատում է ՄՏ ոլորտում՝ հավատարիմ մնալով իր հավատածին...

Ընկերությունը ՄՏ ոլորտում հայտնի կանադական Macadamian Technologies ընկերության մասնաճյուղն է, որը զբաղվում է ծրագրային ապահովմամբ ու շուրջ 70 աշխատատեղ է ապահովում...

Նա մանկուց են հետաքրքրվել տեխնոլոգիաներով, ծնունդից մտ էր այս մասնագիտությանը, երկի կամիտորոշված էր: Լինե մարդ ինքն է կերտում իր ուղին: Կարևորը՝ ունենալ նպատակ ու եթե ունես այն, պետք է քայլեր ձեռնարկես նպատակիդ հասնելու համար...



շատ է արագացել, մանավանդ ՄՏ ոլորտում, եթե մի փոքր թուլացար, այլևս չես հասնի: Ամերիկյան մի արտահայտություն կա՝ long life learning, սովորել ամբողջ կյանքի ընթացքում, կարծում են՝ շատ կարևոր գաղափար է: Ամենադժգոհ բանն է, եթե դու ամեն օր ինչ-որ բան ես սովորում: Մեր կազմակերպությունում այսպիսի մի կարգախոս կա՝ ամեն օր՝ մեկ տոկոս, այսինքն՝ ապահովիր թո՛ւ աճը ամեն օր մեկ տոկոսով, ամեն օր նոր բան սովորիր: Դա մի չքմաղ զգացողություն է. ես մինչև իրիմ փորձում են սովորել ամեն ինչ՝ սկսած լեզուներից, երաժշտությունից մինչև սպորտ: Զինգ տարի առաջ լող են սովորել, ուզում են պարի գնալ, նվագել... Պետք է միշտ շարժման մեջ լինել, միշտ զարգանալ: Դա երջանկություն է, երջանկության հիմքում, կարծում են, սովորել է: Երջանկ լինելով կարող ես աշխարհը փոխել, իսկ դրա կարիքը մենք շատ ունենք. - ասում է Սոֆի Մեհրաբյանը:

